ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ապրիլի 2026 թվականի N 191 - Ա

«ՇԻԿԱՀՈՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՍՄԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի N 216 որոշման հավելված N 1-ի Վարչատնտեսական մասի համակարգողի նկարագրի 1-ին կետի 25-րդ ենթակետը և Սյունիքի մարզպետի 2026 թվականի ապրիլի 15-ի ««Շիկահողի միջնակարգ դպրոց» պետական ոչ առեվտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Լուսիկ Մաքյանի լիազորությունները դադարեցնելու և թիվ 26 աշխատանքային պայմանագիրը լուծված համարելու մասին» N 188 որոշումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

2026 թվականի ապրիլի 17-ից «Շիկահողի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի (այսուհետ՝ Համակարգող) պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հասմիկ Ղազարյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2026-04-16 17:55:24 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. ապրիլի 16
ք. Կապան